

ԽՈՐԵՆԱՅՈՒ ԼԵՁՈՒՆ ԵՎ ՈՃԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

V դարի հայ դրական լեզվի բառապաշարը, շարահյուսությունը և ոճը, հաշված նաև թարգմանական դրականությունը բոլոր առանձին հեղինակների ու թարգմանությունների, այնպիսի որոշակի զանազանություն չեն ցուցաբերում միմյանց համեմատությամբ, ինչպես որ յուրահատուկ կերպով մեր առջև կանգնում է Խորենացին: Եթե կա որոշակի զանազանություն մյուս հեղինակների գործերի միջև, ապա այդ զանազանությունը մի ընդհանուր շեղոք մակարդակից (եթե չհաշվենք Կորյունը) հակվում է ժողովրդա-խոսակցական լեզվի կողմը, ինչպես որ մատնանշում է Այտրնյանը՝ նկատի ունենալով Բուդանդին, Ձղոնին և Փարպեցուն: Ուրեմն հայ հին գրական լեզուն ողջ V դարում ընթանում է մի որոշակի մակարդակով, իսկ շեղումը ժողովրդա-խոսակցական տարրերի օգտագործման օգտին է կատարվում:

Խորենացին այն սահմանակետն է, ուր այդ լեզվական հարթությունը վերջանում է, և մեր առջև կանգնում է գրական մի բարձունք իր լեզվա-ոճական նորություններով և ուղղությամբ: Ամենից առաջ նշենք, որ գրական լեզվի մշակումը տարբերային ենթագիտակցական ուղուց հանվում և զրկվում է գիտակցական և ոճաբանական որոշակի ըմբռնումների սահմանադժում:

Այս առնչությամբ Խորենացին գրում է.

«Կասն որոյ մի զմեզ այսպանեալ պարսաւեսցես, զի ահա որ ինչ առ մերով ժամանակաւս եղեալ կամ դոյզն ինչ հեռի՝ գրուցնցից քեզ անսխալ... հասարակաց խօսիւք անցանելով ընդ պատմութիւնս, որպէս զի մի ոք երեսցի ի պերճաբանութիւնս դրաւեալ առ փափագն, այլ ճշմարտութեան բանից մերոց կարօտեալ՝ ստէպ ստէպ և անյադ առնիցեն զընթերցումն պատմութեանց մերոց հայրենեաց»¹:

Խորենացին որոշակի կերպով իր ընթերցողներին հասկանալ է տալիս, որ երրորդ գիրքը չի գրում այնպիսի պերճաբան ոճով, որով զրել է իր «պատմութեան» նախորդ երկու գիրքը՝ մանավանդ առաջինը, որ մեր հին գրական լեզվի գիտական ճեմարանական ոճի ամենաբարձր արտահայտությունն է՝ բառապաշարի հարստությամբ, շարահյուսական բազմաբարդ ձևերով, յուրօրինակ շրջուն շարադասությամբ, օտարաբան կապակցություններով, որոնք Խորենացու խոսքը տանում են դեպի խրթնաբանություն, զրքայնություն և արհեստականություն: Հին գրական լեզուներին ուղեկից այս երեք հատկանիշները Խորենացին գիտակցաբար մշակում և դարձնում է գրաբարի զարգացման անկյունաքարը: Այստեղից էլ սկիզբ է առնում հունաբանական հայերենը, որը Խորենացու լեզվա-ոճական ավանդների սխալ ըմբռնման ու «խորացման» արգասիքն էր: Մալխասյանը, Արեղյանը, Աղբալյանը Խորենացուն համարում են հու-

¹ Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի, Պատմութիւն հայոց. Թփղիս, 1909, 3-րդ. Ա, 257—258:

նաբանական հայերենի հիմնադիր, մինչդեռ մեզ թվում է, թե նա ավելի առաջ չի դնացել այդ մարդում, քան որ առկա է նրա պատմության առաջին գրքում:

Խորենացին հիացած ու տարված բազմադարյան մշակութային ու զարգացում ապրած, ոճաբանորեն հղկված ու մշակված դրական հունարենով ձգտում էր մեր լեզուն ևս մշակել ու հասցնել հունարենի զարգացման աստիճանին: Այս մարդում նա իր կարելին արեց, և հենց այդ կարելին հետադաշտում երկու հակադիր արդյունք առաջացրեց. մի կողմից առաջիկա դրոշները Խորենացու հանձարի ու հարուստ լեզվի գերությունը մշակեցին ու առաջ տարան հայ դրանի լեզուն իր բնականոն ընթացքով, մյուս կողմից ուրիշները շարաշահեցին Խորենացու լեզվա-ոճական այդ ազդեցությունը և նրա հետևողությամբ մշակեցին արհեստական հունաբանական հայերենը, որը անկախ իր հետագա լեզվական միջոցների օգտակար նպաստից, հետադիմական մի շարժում էր հայոց լեզվի պատմության մեջ, որովհետև դիրն ու գրականությունը բացարձակորեն անչրայետում էր ժողովրդի լայն զանգվածներից ու նաև այն մտավորական խավերից, որոնք չէին ընդունում այդ հետադիմ շարժումը:

Խորենացու միջոցով մեր գրական լեզուն որոշակի մի ուղղություն բռնեց, ուր օտարաբանությունը ոչ թե ինչ-որ զգացվող ակամա ներթափանցում էր, այլ գիտակցական նպատակադրության արդասիք, որի չափազանցումը դարձավ հունաբանական հայերենը իր բոլոր բաղկացուցիչներով:

Ասում են, որ Խորենացին հունաբանական հայերենի հիմնադիրներից մեկն է, և «Պիտոյից դիրք» կոչվածը նրա թարգմանությունն է, որը կատարված է մի մթին հունաբանական հայերենով: Դժվարանում ենք այդ կարծիքը ընդունել. Խորենացին մեծ հայերենասեր ու ժողովրդասեր մի մարդ էր և որոշակի կերպով ընդունում էր գիր ու գրականության լուսավորական նշանակությունը ժողովրդի հոգևոր կյանքի զարգացման համար. նաև դիտեր, որ հունաբանական հայերենը անհասկանալի պետք է մնար, ուստի և այդպիսի լեզվով գրված գրքերը գործնական օգուտ չէին բերելու: Բացի այդ, նրա համար Մեսրոպի և Սահակի լեզվական ավանդները սրբազործված էին, նա չէր կարող թույլ տալ այդպիսի շեղում:

Բազմաթիվ փաստերով ապացուցված է, որ Սուտ Կալիսթենեսի «Պատմություն Աղեքսանդրի» գիրքը թարգմանել է Խորենացին: Գրա-պատմական այս խնդիրը ապացուցող Հ. Տաշյանը հիշյալ գրքի լեզվի ու ոճի մասին գրում է հետևյալը, որ կարող է ծառայել իբրև բնութագրություն նաև Խորենացու «Պատմություն Հայոց» գրքի լեզվի ու ոճի համար: «Գիտնալով և դարձնելով թարգմանալի հմտությունը յոյն լեզուին և մեծ վարժությունը՝ ամեն բան բուն հայ ուսուց փոխելով թարգմանելու, պետք ենք նույնն սպասել նաև այս գրքիս, որուն թարգմանիչը Մ. Խորենացին, ունէր արդեամբք այս հատկությունները: Բայց նույնիսկ այն, որ թարգմանիչը Մեսրոպայ երկրորդ դպրոցէն էր, ինչպէս սովոր ենք բնել, այսինքն այն խմբէն, որոնք քիչ շատ յոյն լեզուի օրինակին կուգէին նմանեցնել իրենց լեզուի: Եւ, կը ստիպէր զմեզ ընդունելու, որ այս թարգմանութեան լեզուն չի կրնար բոլորովին զերծ ըլլալ յոյն լեզուի ազդեցութենէն: Ասով արդեն թարգմանութեանս զխաւոր կէտերը ճանչցած կըլլանք, այսինքն ճշտութիւն և հաւատարմութիւն բնադրի, բնիկ հայ ունոյ հեղուած քաղցամանութիւն՝ Խորենացոյ հատուկ կտրուկ և ջղուտ. բնեմ նաև մեզ յուսացածէն շատ աւելի անխառն լեզու, սակայն ոչ քիչ բնիկ մեսրոպեան առաջին

դպրոցին յատուկ դասական լեզու ամեն տեղ. այլ շատ տեղ արդեն լեզուի այլալուծական նշանները կրելով և բոլոր բնականին ալ յունականին ազդեցության ներառված²:

Իսկապես Խորենացու լեզուն գերծ չէ հունարենի ազդեցությունից, ինչպես որ պերծ չէ նաև մեսրոպյան համարված գրվածքների լեզուն. Խորենացու լեզուն բարձր, մշակված գրական լեզու է, որը իր հետևում է թողել շարահյուսական պարզունակ կառուցվածքները, մշակել է պարբերության խոսքի դասական նմուշներ, մի խոսք, որ ի վիճակի է արտահայտելու տրամաբանորեն բարդ ու միմյանց հետ միահյուսված դատողություններ իրենց կողմնակի բաղադրիչներով: Եվ չնայած պարբերության ոճի բարդության ու զրբայնության՝ առկան իշխանին՝ ուսումնասիրողների մեծ մասը գտնում է, որ Խորենացու լեզուն ու ոճը պարզ է ու կանոնավոր:

Ս. Մալխասյանը այսպես է բնութագրում Խորենացու լեզուն և ոճը. «Խորենացու լեզուն արվեստական է և բարձր, որով շատ զանազանվում է Փավլոս-տոսի ու Փարսեղու գրված ժողովրդական լեզվից: Նա փայլում է մոխրությամբ, բառերի արվեստական, բայց պատշաճ ու ներդաշնակ դասավորությամբ, կանոնավոր քերականությամբ թե՛ ստուգաբանության (ձևաբանության — Վ. Ա.) և թե՛ շարահյուսության մեջ. չնայելով որ երբեմն շատ երկար պարբերություններ է գործածում, ոչ մի անգամ խոսքի տրամաբանական կապը չի խզվում, այլ ստացվում է մի բարդ, բազմահարկ և զեղեցիկ կառուցվածք: Շաղկապների, կրճատված նախադասությունների նպատակահարմար գործածությունը ոչ միայն խոսքը պարզ և հասկանալի է դարձնում, այլև ընթերցողին միջոց է տալիս հետևելու հեղինակի մտածողության եղանակին: Նա լեզվի վարպետ է և քերականության բնական բոլոր միջոցները հմտորեն ծառայեցնում է իր մտքերն արտահայտելու³: Խորենացու լեզվի ու ոճի այս բնութագրությունը հաստատում է Աբեղյանը: Նա գրում է. «Նրա ոճը, ինչքան էլ հաճախ զարդարուն ու պերճ է, բայց ընդհանուր առմամբ շատ պարզ ու մեկին է, թեթև, շատ կանոնավոր ու դյուրին, միանգամայն և ախորժելի, երբեք չոր ու ցամաք: Երբեմն, երբ հարկավոր է ըստ նյութի պահանջներին՝ գորեղ տպավորություն թողնել, կիրառում է շրջումներ ու զեղչումներ: Եվ այս անում է նա ոչ արվեստականությամբ, այլ բնականորեն⁴:

Այս ընդհանուր բնութագրությունները չեն տալիս Խորենացու լեզվի ու ոճի այն լիակատար ու ճշգրիտ պատկերացումը, ինչ որ մենք ստանում ենք նրա բառապաշարի ուսումնասիրությունից: Խորենացին այն հեղինակներից է, որոնք իրենց լեզվի բառապաշարով մեծ նպաստ են բերել մեր հին գրական լեզվի հարստացման գործին: Հետազոտությունը ցույց է տալիս, որ Խորենացին ավելի քան 800 բառ է գործածել, որոնք իրենցից առաջ գրական լեզվի մեջ բաղադրացիություն չեն ստացել: Սակայն խնդիրը այդ քանակը չէ, զարմանալիորեն այդ բառապաշարի բազմաթիվ շերտեր այսօրվա մեր լեզվի համար սովորական ու ընդարձակ տարածում գտած բառեր են: Ինչո՞վ պետք է բացատրել այս հանգամանքը: Խորենացին այն հեղինակն է, որ բոլոր իր նա-

2 Չ. Տաշյան, Ստոյն-Կալիթենևայ Վարուց Աղերսանդրի. Վիեննա, 1892, էջ 183 (ընդգծումը մերն է — Վ. Ա.):

3 Մոլոսես Խորենացի, Հայոց պատմություն (աշխարհարար), Երևան, 1961, էջ 48.

4 Տե՛ս Մ. Արևիկյան, Երկեր, հատ. Գ, Երևան, 1968, էջ 319:

խորդների համեմատությամբ ամենից շատ է ենթարկվել հունարենի ազդեցության, և հենց այսօրվա մեր լեզվի մեջ հունարենի ազդեցությամբ կազմված նրա հիշյալ բառերից շատերը որդեգրվել են անվերապահորեն: Պետք է համարձակորեն նշել, որ հունաբանական լեզվական այն շերտը, որ այդքան զորեղ կերպով հետք է թողել մեր հետագա լեզվական մշակույթի վրա, մասամբ գալիս է հորենացուց և նրան հետևելուց:

հորենացու գիրքը հայոց դպրոցներում լեզվի հիմնական դասագիրքն է եղել հազար հինգ հարյուր տարի: Բազմաթիվ սերունդներ՝ անգիր սովորելով այդ գիրքը և դառնալով մշակույթի գործիչներ, հորենացու հունաբանական բառերը և սրա հետևությամբ ստեղծած իրենց սեփական ժառանգել են մեր լեզվին:

Ընդհատ է, հունաբանական կազմությունները այնպիսի մեծ քանակ չեն կազմում, որ կարող է մի պահ թվալ, սակայն ինչ էլ որ հորենացին կազմել է, կենսունակությունը մեծ մասով պահպանել է. օրինակ՝ արտահայտվել, արտասանություն, արափայլել, առաքություն, բաղդատել, գերազանցել, գերազանցօրէն, գերապայծառ, գերապանծ, հակամիտել, հոմանուն, մակագրություն, յարուհետել, ներդրական, շարագիր, շարագրել, շարագրություն, շարադասել, շարադասություն, շարայարել, պարականոն, պարունակել, ստորագիր, ստորագրություն, վերածնություն, հնացել են հետևյալ բառերը՝ արտահանել (հակաճառել), արտասանմանել (արտաբանել), բաղդատել (սուտ մեղադրել), բացափայլել (պարզ դարձնել), հոմիշխան, յարահետել, պարածածկել, պարայածել, վերադէտ, վերահայեցող:

Սակայն հունարենի ազդեցությունը, որ իր ժամանակ ամենից ավելի է եղել հորենացու վրա, չի խանգարել մեր զրական լեզվին ժառանգելու պատմիչի հարուստ բառապաշարու նույնիսկ երբ հորենացու կազմած բառերը համեմատում ենք ժողովրդա-խոսակցական լեզվին մեծ տուրք տված Բուզանդի ու Փարսեցու բառապաշարի հետ, նկատում ենք, որ հորենացու ասպղային պիտանի ժառանգությունը ավելի մեծ է և զրական լեզվի կազմակերպման ու զարգացման համար ավելի կարևոր: հորենացին է կազմել դիտական, պատմագիտական, նկարագրական, պետական կարգ ու սարքի, ռազմական, հասարակական բազմազան փոխհարաբերություններ արտահայտող և մեր զրական լեզվի ողնասյուներ կազմող բազմաթիվ բառեր:

հորենացին իր զրքում ունի մի շարք զեղեցիկ նկարագրական կտորներ, որոնք զեղարվեստական խոսքի օրինակներ են: Այդպիսի զեղարվեստական խոսքը պատկերավոր դարձնելու համար նա օգտվում է զեղեցիկ խոսքի ոճաբանական բոլոր նմաներից և բնականորեն ստեղծագործում է այնպիսի բառեր, որոնք ավելի ցայտուն ու բնութագրական են տվյալ նկարագրության համար: Ահա մի փունջ այդպիսի բառերի, որ թարմությունը չեն կորցրել մինչև իսկ այժմ. ականակիտ, աղերել, ամպրոպային, ալգանալ, անդեղալիւ, անձնագեղ, անձնալոյզ, անբջական, աշեղ, աշիկ, արեգակնակ, արեգակնակն, արեգակնառես, արեգաբուն, օղագնաց, բարեգեղ, բարեգնաց, բարեգորություն, բարեխառն, բարեհամ, բարեկարգություն, բարեխառն, բարեվայելչություն, բլրածն, բոցակնագույն, գահավիժ, գահավիժություն, զեղապատշան և այլն, որ մի հարյուրակ բառերից անցնում է:

Այո բառերը կազմված են զեղարվեստական խոսքի բոլոր հատկանիշների հաշվառումով, առկա են դիպուկ պատկերավորությունը, գեղեցիկ շափաղանցությունը, իմաստային հարուստ փոխաբերություններն ու շրջաբանությունը, որոնց պատճառով նրանց կյանքը այսքան երկարաձգվել է, իսկ ապրելու հեռանկարները անվերջ են. բառերի այս շարքը բավական չէ, որպեսզի մի հին դրոշի լեզվա-պատմական արժեքը պատշաճորեն բարձր գնահատվի: Արգեն պարզ երևում է, որ դրանք գերազանցորեն հեղինակային կազմություններ են:

Խորենացին կազմել է մարդու բնավորությունը, հոգեկան կյանքը, ապրումներն ու ներքին զրահորումները բացահայտող բաղաձայն բառեր, որոնք դարձյալ շարունակում են իրենց բաղաձայնային կյանքը. օրինակ՝ ամոքալի, ալրասիւր, անժուժկալ, անիմաստաւէր, անկասկածարար, անկատարութիւն, անկարանայ, անհաւաստի, անմաքաւէր, անվրդով, աշխատասիրութիւն, աշխատասիրել, արդարարան, արդարարար, արժանահաւատ, արիարար, արդարադատութիւն, բանական, բարեբախտ, բարեբախտութիւն, բարեբաստիկ, բարեհամբաւութիւն, դեռահաւատ, եղբայրարար, ընթերցաւէր, բնամակամ, քուլամիտ, քուլամոբութիւն, քուլասրտութիւն և այլն:

Այստեղ չեն բերված նույն բնույթի հնացած բառերը. իսկ երբ նայում ենք բառերի այս շարքին, մեզ թվում է, թե սրանք այսօրվա գրական լեզվի բառեր են և ոչ թե տնավորված են գրական լեզվի մեջ հազար հինգ հարյուր տարի իբրև այդ լեզվի մշտական անհրաժեշտ տարրեր:

Խորենացին մեր լեզուն հարստացրել է պետական, ռազմական, հասարակական փոխհարաբերություններ արտահայտող բաղաձայն բառերով: Այս մարդում ևս նա իր մրցակիցը չունի: Այստեղ բերվում են դարձյալ կենսունակ բառերը. ինչպես՝ արողակալ, արողակալութիւն, աղատանոց, անագգի, աննշանակ, անբանութիւն, աշխարհակալութիւն, արեալանիստ, բազէակիր, բազմարեակ, բազմամարդացնել, բազմամարդութիւն, բազմասերութիւն, զխանոց (սաղաւարտ), դիվանագիր, գրահագգեստ, քաղաղիր, քաղակալ, քաղակից և այլն:

Խորենացին մեր գրական լեզուն հարստացրել է գրական, լուսավորական, դիտություն, արհեստների, արվեստի, գյուղատնտեսություն մի շարք բառերով. այսպես՝ ալլարանարար, անբերութիւն, անդեւարդ (նախորդ), անոն, աշխարհագրութիւն, աշտարակաշինութիւն, առասպելարանել, առասպելարար, ասիական, արգասատու, արգասանդահող, արձանագրութիւն, ատարարանութիւն, բազկակալ, բազմարարտ, բեմասացութիւն, զծագրութիւն (օրինակ), զոգատու, զորձակցել, զորձառնութիւն, զորձարան (մարմնի մաս), զրչութիւն, դաշնաւորութիւն, եղանակ, եղեգնապուրակ, եռայարկ, ժամանակագիր, ժամանակագրութիւն, իրագործել, իրագործութիւն, իրական, իրակութիւն, խարբխել, ծաղկակալ, խոյրարար, ծննդարանել, ծննդարանութիւն, ծովագնաց, կանովնել, կաշնալ, կատակերգութիւն (նկարչութիւն), կռահահարութիւն, կրկնագրել, կրկնայակ (երկհարկանի), հագնեցութիւն և այլն:

Խորենացու միջոցով մեր լեզուն հարստացել է աշխատանքային, առօրյա կենցաղային, առտնին և այլ կարգի բաղաձայն բառերով. օրինակ՝ ազատարար, աղնատանք, ամսական, անանցական, անահելութիւն, անաշխատ, անարգարար, անարժանարար, անբաղձալի, անդուլ, անժամանակ, անկարելի, անհասանելի, անհարազատ, անմատչելի, անմարդ, անյայտարար, անյայտաղա-

րաւ, անյիշատակելի, անյուսանալ, անյուսուրիւն, անշեղ, անսայրաք, անտանելի, աջակցել, առաջիկայ, սուտաձեռնութիւն, արագարանութիւն, բազմարիւաւոր, բազմագան, բազմօրինակ, բարձրագագաթն, բարձրահասակ, բերանբացութիւն, բնագաւառ (*բնիկ գաւառ*), զեղջուկ, զինարարու և այլն:

Վերոհիշյալ ցանկերի բաղադրյալ բառերից մի մասը անշուշտ հալ ժողովրդի կազմած բառերն են, բայց զրանք այնպես են մերվել հորենացու բարձրաձգ գրական բառերի ոլորտում, որ զրանց առանձնացումը այնքան էլ զոյրին չէ: Բոլոր զեպքերում այդպիսի ժողովրդական բառերը հորենացու միջոցով են մուտք գործել գրական լեզուն: Փորձենք զրանցից մի բանիսը առանձնացնել: Ամսական, անբերութիւն, անղէուրդ, անմաքաւսէր, անտանելի, աշեղ, աշիկ, ատակել (*մեր իոսովածքում հատրկել*, այժմ իբրև հնացած վերոհիշյալ ցանկերում տեղ չունի), արեգակնակ, բան և գործ, զինելէտ, Լեղզնիկ, զովութիւն, զուցել (*զուցել*), խնամի, խնամենալ, կակագել, կատաղել, կաւմիկ, կիսակտուր, մեծախօս, շատակեր, նագելի, շիկափակ, ոսկէօղ, պաղանալ, սալուրդ, սերտել, սրել, տնկալուշ, տաւալու և այլն:

Հորենացին մեր գրական լեզուն է բերել մի շարք արմատական բառեր, որոնք նա անշուշտ ժողովրդից է վերցրել և առաջինը ինքն է զրանց գրական քաղաքացիութիւն տվել: Դրանք քիչ բացառութեամբ շարունակում են իրենց գոյատևութիւնը. այդպիսի բառեր են. ապշուպ, արփի (*արմատը նաև արփ*), խազմ (*կոնի*), կաղաղ (*որշ*), կծի, մակամ, յարմար, շեշտ, պաղ (=բար, պաղանձաւ բառի մեջ. մեր բարբառում պալ), պալիկ (*ժամապահ*) ունի նաև Փարպեցին), սաղաւթ, սաւառ (*ձև, տարազ, կերպ*), վարաւ (*վալաշոտ*), տալգը, տապալ, տառ, տից, խաւարծի, սուտախուր:

Հակառակ այն բանի, որ հորենացին ամենից ուժեղ է կրել հունարենի ազդեցութիւնը, այնուամենայնիվ նրա փոխառյալ բառերը այնպիսի մեծ քանակ չեն կազմում: Հունարենից փոխառյալ բառերը՝ ներառյալ նաև մյուս լեզուներից վերցրածները հետևյալներն են. ագոն (*մրցութիւն*), աթերայ (*իր փոխառածն է ըստ Էրեսթին հարիսայ*), աթութայ (*տառ. ունի նաև Փարպեցին, որ հորենացուց է առել*), ախտարմող (*աստղագիտական*), պրակ, անդրի, արքեպիսկոպոս, բորբորիտոն (*վալաշոտ. հունարենից*), զրակոնտիկոն (*կիտովածք. հունարենից իր փոխառածն է*), Լեղզնիկաստիկոն (*կրոնական տիտղոս. հունարենից, հորենացուն է*), Եպարքոս (*կուսակալ. հունարենից*), Եպիսկոպոս, լաքայ (*պարսկերենից. իրենն է*), կոմէս, հիպէրէտ (*փոքրավոր. իրենն է*), հիպատեան, հիպատոսութիւն, Ելեփանդական (*Երեք բառն էլ օտար արմատներից է կազմել*), հոետոր, մաշարայական (*ասոր. մաշարայ = մաշկային հիվանդութիւն*), մետաղ, մեքենայ, մղոն, ողիմպիական, պատաղորոս, պարականոն, պոռնիկ, սակր (*հրովարտակ. Կորյունը ունի սակեր ձևով*), սինկղիզոս (*ծերակույտ*), սիպոն (*զրոշակ. ինքն է փոխառել*), սիւղորայ (*վանկ*), սպուղեայ (*ճղնաւոր. իրենն է*), ստրատելատ (*զորավար*), փիլիսոփայ, քարտէս (*գիրք*), քարտուղար (*իրենն է*):

Համեմատաբար շատ սակավ են հորենացու կազմած կրոնական բառերը, և սա շատ հասկանալի է, որովհետև նրա պատմութիւնը ազդային քաղաքական պատմութիւն է: Նա առաջին գծի վրա է դրել ժողովրդի ինքնութեան, անկախութեան և հայրենիքի ազատութեան մեծ խնդիրը: Հայ Եկեղեցին այնքանով է տեղ գրավում նրա զրքում, որքանով որ անհրաժեշտ էր այդ, ուստի և

քիչ են եղև ինչպես կրոնական բառերը, որոնք Աղաթանգեղոսի գրքում ավելի մեծ թիվ են կազմում:

Խորենացու բառապաշարը ունի նաև հնացած շերտ, որ հատուկ է ամեն մի նշանավոր լեզվաշինարարի: Առանց փաստարկումների լոկ դիտողությամբ կարող ենք ասել, որ Ս. Նստարյանի նորակաղմ բառերը ավելի շատ հնացման օրինակներ են տալիս, քան տվյալ դեպքում Խորենացին ունի: Իր ժամանակակիցների համեմատությամբ Խորենացու բառապաշարը ավելի մեծ հնացում չի թողել իրեն ժառանգություն: Այդպիսի բառերի թիվը 200-ից անցնում է:

Հնացման պատճառները բազմազան են, և բոլորն էլ լեզվի բառապաշարի հնացման համար բնական են: Ամենից առաջ նշենք, որ բառաբարդության եզրերից մեկը կամ երկուսն էլ լեզվից դուրս են եկել՝ ժամանակին էլ զրկված լինելով դործածության հաճախականությունից. այսպես օրինակ՝ աղիագուր, անխալամ, անպալագատ, սաղապանեմ (թափառելով), հիկեմ և այլն:

Հնացումը հետևանք է նաև բառիմաստի փոփոխության. բարդ բառի այս կամ այն բաղադրիչը նախկին իմաստը կորցնում է, իսկ ստացած նոր նշանակությունը չի համապատասխանում տվյալ բարդության համար անհրաժեշտ իմաստին. օրինակ՝ Բաբ բառը նշանակել է շատ, առատ, որպիսի նշանակությամբ կազմված է Բաբար (առատաբեր, բերրի), Բաբարուրիւն, Բաբարսուր և այլն: Հետագայում Բաբ բառը իր այդ նշանակությունը բոլորովին կորցրել է, ուստի և նրանով կազմված այդ կարգի բարդությունները մեռել են:

Նորակաղմ բառը երկար կյանք չի ունենում նաև, երբ իր համանիշը լեզվում կա և լայն կիրառություն ունի. այսպես օրինակ՝ Խորենացու տուրնջեմալին, վիսական և այս կարգի այլ բառեր մրցության չէին կարող դիմանալ, որովհետև լեզվի մեջ սովորական կիրառություն ունեին տուրնջեման և վիս բառերը: Հնացումը առաջանում է նաև բառի ածանց դառնալով. ինչպես՝ ամենագան (դան—տեսակ, որ հետագայում ածանցի է վերածվել):

Հնացումը հետևանք է նաև անհաջող կազմության. օրինակ՝ Խորենացին ամբայն բառից կազմել է անբոխութիւն նույն նշանակությամբ. անյաջ կիրառված է իբրև անյաջող, անխալամալ (ախտաբեր), սերմանալու (փխնկ՝ սերմնալու), զագանամարտիկ (զագանների հետ մենամարտ), Եկաուրութիւն (գալուստ) և այլն:

Հնացումը հետևանք է նաև հասկացությունների անհետացման. օրինակ՝ զահարար, ձիւնակիր, նակատագրել և այլն:

Խորենացին այս բառերի մեջ ունի նաև այնպիսիք, որոնք արդյունք են օտարաբան կազմության. ինչպես՝ անձնագեղ (փխնկ՝ դեղանձն), արժանահալու, Երեսալու (առաջամարտիկ. հունարեն *ερεσος* — երես և ռազմական ճակատ), կենցաղօգուտ, ընդդիմափառ, մերձագալակ (փխնկ՝ զառակամերձ), մօտասեր (փխնկ՝ սերնդամօտ), նախագան, նախաշալիղ (այսինքն շաղկապիկի), սիրարան, վիմատաշ (-տաշավիճ), տիրագլուխ (-գլխատէր, աղատ ինքնագլուխ):

Անգործածական են մնացել նաև հազվագեպ փոխառությունները և սրանցով բաղադրված բառերը, ինչպես՝ սակր (հրովարտակ), հիպերէտ (փոքրավոր), մաշարայական և այլն:

Բառակազմության դործընթացում նկատվում են հնչյունական անկումներ, ինչպես՝ անձնալ (փխնկ՝ անձնեայ), լեռնոտեայ: Կան մի քանի բարբա-

ռալին բառեր ու բառաձևեր. պար (փխնկ.՝ փոր—կարաս), երգարան (երգեր), պոպել (դուրս քշել, խոփել տալ), պոստել, ջալոտի. որ բարբառային շուտի (մտրակ) բառն է, վանորայ, տիկտեսակ (պաճուճպատանք), ցականել (կարոտության մեջ լինել), արտախուր, լալֆայ, տից, խաուարծի. յոգոցհանութիւն, մարդկութիւն փխնկ.՝ մարդիկ (Ջմիջոց հոլովին ընտ մարդկութեամբ, 167), ալգեստանոլ (167), փխնկ.՝ ալգիք (բաղամութիւն ալգեստանոլ, 167):

Խորենացին ձևաբանական կանոնիկ ձևերի մարզում այնպիսի շատ շեղումներ ու նորություններ չի տալիս, որոնք հակադրվեն իրենից առաջ դոյություն ունեցող կանոնիկ ձևերին: Մի քանի նորություններ նկատվում են բայակազմության մեջ: Կանոնիկ չէ մտուցանել պատճառականի մտույց ձևը (եւ այլ շուրս ընդ յուրվ տեղիս ածեալ մտույց անյայտ գնացիւք, 339): Երկու ձևադիր շունեն մտույց, որ պետք է լիներ մոյծ: Բերված նախադասության մեջ մտույց բայաձևը հետսամուտ է թվում, առանց դրա նախադասության նշանակությունը միանգամայն պարզ է. ուրիշ ջրեր շատ տեղերով բերեց անհայտ ընթացքով, այսինքն գետնի տակով. իսկ մտույց այլուեւ ալելորդ է և իմաստի խանգարիչ:

Կանոնիկ չէ նաև երկուցեալ անցյալ դերբայը (երկուցեալ ի Շապհոյ, 293), որ պետք է լիներ երկեցուցեալ:

Չ, ոչ ածանց ունեցող բայերը ենթակայական դերբայ չեն կազմում. V դարում չկան մատչող, քաֆչող, կորնչող ձևեր: Խորենացին միանգամայն բնական կերպով կազմել է փախչող (ժողովրդականք վեսք, ստահակք, մեծախօսք, անվաստակք, արբեցողք, վնասակարք, փախչողի ժառանգութենէ, 364):

Մեյեի դիտողության համաձայն է, ի խոնարհման բայերից V դարում ցոական անցյալ դերբայ են կազմում -յեմ (յիմ), -չեմ, -նեմ (-ծիմ) -ջեմ (-ջիմ) վերջավորող բայերը. ինչպես՝ կոչեմ-կոչեցեալ, աղաչեմ-աղաչեցեալ, անեմ-անեցեալ, ննջեմ-ննջեցեալ, հայիմ-հայեցեալ, նայիմ-նայեցեալ⁵:

Սրանց վրա նա ավելացնում է նաև՝ կամիմ-կամեցեալ, սիրեմ-սիրեցեալ, խօսիմ-խոսեցեալ, այրեմ-այրեցեալ, կարծեմ-կարծեցեալ:

Աստվածաշնչում կոչեալ ձևը հազվադեպ է: Ըստ «Համաբարբառի» միայն կոչեալ մտին առաջի (Ա ԵԶՐ, գ. 17), մնացած բաղամաթիվ օրինակներ կոչեցեալ ձևով են:

Կորյունը այդ դերբայը 5 անգամ է կիրառել, որից մեկն է կոչեալ ձևով, մնացած 4-ը կոչեցեալ է:

Աղաթանգեղոսի ինը կիրառությունից ութը կոչեցեալ է:

Բուդանդի յոթից չորսն է կոչեցեալ: Եղիշեն մի անգամ է հիշատակել, որը ըստ տարբեր ձևադրերի կոչեցեալ և կոչեալ ձևերով է:

Փարպեցու տասներկու կիրառությունից միայն երկուսն է կոչեալ, մնացած տասը կոչեցեալ ձևով է:

Խորենացու մոտ քառասուն կիրառությունից երկուսն է կոչեալ և այն էլ կոչեցեալ տարբերակներով, մնացած բոլոր գործածությունները զրահորված են կոչեցեալ ձևով:

Ննջել բայը միանգամայն որոշակի դատում է ցոական և ոչ ցոական ձևերի իմաստները: Ցոական ձևը նշանակում է մեռել, մեռել, իսկ ննջեալ ձևը անց-

⁵ Տե՛ս A. Meillet, Altarmenisches Elementarbuch, Heidelberg, 1913, էջ 96—97.

յալ դերբայ է՝ ֆնեալ իմաստով. օրինակ՝ ըստ «Համարաբառի» Աստվածաշնչում ննջել բայի անցյալ դերբայը հինգ անգամ է կիրառված, որից չորսը ննջեցեալ ձևով է, և չորսն էլ նշանակում են մեռել (գոյական), իսկ մեկը (Եթե չիցէ ննջեալ ընդ քեզ առն) բայ է՝ ֆնել նշանակությամբ:

Ազաթանգեղոսը երկու անգամ ունի ննջեցեալ ձևը, երկուսն էլ գոյական են՝ մեռել նշանակությամբ: Բուզանդը միևնույն նշանակությամբ մեկ անգամ է գործածել (Որդին Աստուծոյ եկեալ Բասանից և տացէ հրաման երկնաւոր մշակացն ընդ նմա իջելոց ի վերուստ՝ ի գերեզմանացն հնձել գամենայն ննջեցեալսն յարուցեալս, 116):

Եղիշեն նույնպես երկու անգամ ունի ննջեցեալ, որ դարձյալ մեռել է նշանակում:

Խորենացին գործածել է ննջեալ (մեկ անգամ միայն), որ ունի ֆնել նշանակությունը (Սա...տրտմութեամբ մեծաւ ննջել՝ երևութացաւ նմա ի բուն խաչ աստեղեայ յերկնից, 236):

Աղաչել բայի անցյալ դերբայը ըստ «Համարաբառի» հիշատակված է երկու անգամ, երկուսն էլ աղաչեալ ձևով. աղաչեցեալ չկա:

Եղիշեղը միայն մի կիրառություն ունի աղաչեցեալ ձևով:

Ազաթանգեղոսը դարձյալ ունի մեկ անգամ, բայց աղաչեալ ձևով (Նորա աղաչեալ զԳրիգորիոս, 397): Մյուս հեղինակները, ինչպես և Խորենացին չունեն հիշյալ անցյալ դերբայը:

Հայտնի է նաև, որ խօսեալ ու խօսեցեալ ձևերը առաջացել են իմաստի երկփեղկումով. խօսեալ նշանակում է նշանակում:

Քանի որ անցյալ դերբայի այդ երկու ձևերը հետաքրքրություն են շարժել, և Մեյեն էլ վերոհիշյալ բացատրությունն է տվել, մենք հարմար համարեցինք այստեղ անդրադառնալ այդ հարցին և նշել. ե, ի խոնարհման պարզ բայերը իրոք անց. դերբայի համար երկու ձև ունեն՝ եալ, եցեալ: Ըստ հիմքային կազմության անցյալ դերբայը պետք է իրոք ունենար եցեալ ձևը՝ զրեաց, սրանից էլ զրեացեալ-զրեցեալ: Սակայն V դարում, ինչպես տեսնում ենք, իշխում է եալ ձևով անցյալ դերբայը: Ժողովրդի բերանում եցեալ երկար ձևը վերածվել է եալ-ի, զրեցեալ օրինաչափական ձևը իր տեղը զիջել է զրեալ ժողովրդական ձևին:

V դարի գրողները այդ երկու ձևերի ոճաբանական տարբերակումը գիտակցել են և ձգտել են ցոական ձևը վերականգնել, սակայն հաղթել է ժողովրդական անցոական ձևը: Ինչպես երևում է, ցոական ձևը որոշ բայերի համար մնացել է իբրև իմաստային տարբերակման միջոց:

Մեյեի դիտողությունը ճիշտ է միայն եյեմ (յիմ) հայիմ-հայեցեալ, հայիմ-հայեցեալ ձևերի համար, որոնք չեն դարձել հայեալ, հայեալ, զուտ հորանջային վիճակից խուսափելու համար:

Իսկ ինչ վերաբերում է աճեցեալ ձևին, ապա սա այնքան սակավ է կիրառված, որ հիմք չի տալիս որևէ եզրակացության գալու համար: Ազաթանգեղոսը և Եղիշեն երկուական անգամ ունեն աճեցեալ, երկու անգամ էլ Աստվածաշունչը ունի եցեալ ձևով, Փարպեցին կիրառել է չորս անգամ, որոնցից մեկը՝ աճեալ: Եղիշեղը, Կորյունը, Բուզանդը չունեն այդ դերբայը: Իսկ Խորենացին գործածել է երկու անգամ նույնպես աճեցեալ ձևով:

Բայց հենց այստեղ պետք է ասենք, թե որքան հեռանում ենք V դարի սկզբնական շրջանից, եցեալ ձևը շատանում է: Խորենացին ունի տուլեցեալ, Տ աճեղես, № 2

փշեցնել, գործեցնել, խնդրեցնել, հանեցնել, հնչեցնել և այլն, իսկ ամենից անհավանականը տուեցնել-ն է (իսկ Մեսրոպյան երթեալ յաշխարհին 'Լրաց' առնէ և նոցա նշանագիրս տուեցելովն ի վերուստ շնորհան, 328):

–նցնել-ով կազմված անցյալ դերբայները արդյունք են լեզվի զրուկանացման՝ զրբայնացման:

Խորենացու օտարաբանական մեղանշումները առավելապես բաղմաղան են շարահյուսության մարդում: Մալխասյանը չափազանցում է՝ տեսելով, թե նա հունաբան հեղինակ է, բայց հիշտ կերպով բերում է շարահյուսական օրինակներ, որոնք իսկապես կազմված են հունարենի կաղապարով:

Ըստ Մալխասյանի նշման Խորենացին գործածում է հայցական հոլովով անթակա անորոշ դերբայի մոտ. օրինակ՝ Եւ սիրելի էր ինձ յայնժամ դալ փրկչին և զիս զնել, և առ նոքօք յաշխարհ զմուտն իմ լինել (66): Եւ ասէին գողցես յերկրին Հայկազանց զայս լինել (75):

Խորենացին երկրորդական նախադասության հետ ձուլում է հարաբերյալը՝ փոխելով հոլովը. օրինակ՝ Անմահ յիշատակ թողուլ զայս քեզ և որ զկնի քո զալոց են ազգի (փխնկ.՝ և ազդաց, որ զկնի քո զալոց են, 6): Եւ զի՞նչ ինձ ի զիրսս յայտոսիկ արդեօք իցէ բան սիրելի, քան թէ որ յաղագս սորա էին դովեստք և պատմութիւնք յերկարել (փխնկ.՝ քան զդովեստս և պատմութիւնս յերկարել, որ յաղագս սորա էին, 73):

Հունարենի ոգուն համապատասխան Խորենացին երկրորդական նախադասությունները տեսակ-տեսակ կրճատման է ենթարկում. օրինակ՝ Եւ այսոցիկ այսպես կարգելոց կամ հաւաստի և կամ դոյզն ինչ կասեալ յարդարոյն՝ սկսայց քեզ և որ ինչ զկնի այսոցիկ ի հիւսման պատմութենէ Պիտոյից (փխնկ.՝ և զայսոսիկ այսպէս կարգելով, 57): Իսկ մերոցն ոչ այսպիսի ինչ խորհեցելոցն, մնացին նշանակեալ ի վերջինսն (փխնկ.՝ իսկ մերոցն՝ ոչ այսպիսի ինչ խորհեալ, 66):

Կրավորական բայերին հատկացնում է ուղիղ խնդիրներ. օրինակ՝ ի շահատակեն իւրում հարկանի յումեմնէ սակերք զգլուխն (փխնկ.՝ զլուխն, 236): Եւ ի զվասն էրն ի խորհրդակցացն հարցանիլ՝ յերկարի ժամս ինչ զպատասխանիսն (փխնկ.՝ վասն էրն, 75):

Անցյալ դերբայը իբրեւ որոշիչ է գործածում այնտեղ, որտեղ սպասելի էր անորոշով դարձված. օրինակ՝ վասն մտելոց անուանց և գործոց նոցա ի քարտէս արքունի (փխնկ.՝ վասն մտանելոյ, 66):

Խորենացին առանձնապես սիրում է շարադասական շրջումներ՝ լրացուցիչներն ու լրացյալները միմյանցից հեռացնելով և այլ բառերով ընդմիջելով. օրինակ. զանդուլ հոգոյն ի վերայ քոց իմացուածոց զշարժմունս ծանեայ... (5): Ի Բաբէն զրկեալ ի հովուէ և ի հովուակցէ (փխնկ.՝ ի քաջէն հովուէ և ի հովուակցէ զրկեալ, 358): Ի մեւուս վերայ շահատակեալ յարձակէր տեւուրեանս (փխնկ.՝ ի վերայ տէրութեանս մերոյս շահատակեալ յարձակէր, 76): Այսպիսով Խորենացին շատ և բորբոք պահելով զկայծակն (6):

Մալխասյանի բերած այս հունաբանությունների վրա ավելացնենք նաև հետևյալները. հունարենի շարահյուսության աղղկեցության արդյունք է նաև ուղղական հոլովով ենթական անորոշ դերբայի հետ. օրինակ՝ ի ձեռն որոյ և զայսորիկ զսկզբնատիպն ասիս (դու) ուրախացուցանել. ասվում են դու ուրախացնել՝ ալիսինքն ասում են, որ դու ուրախացնում ես (6): Եւ մեր յընթեռնուլ զառ ի նոցանէ շարածս բանից, քստ աշխարհօրէն կարդաց իմաստեալ ա-

սիմֆ. մենե՛ ասվում եմք իմաստնանալ՝ այսինքն ասում են, որ մենք իմաստ-
նանում ենք (10):

Խորենացին անորոշ դերբայի օրինակով հայցական և ուղղական հոլովով
ենթականեր է կիրառում նաև անցյալ դերբայի հետ միևնույն ոճով՝ այսինքն
դերբայական դարձվածի ձևով. օրինակ՝ Եւ ի սոցանէ ասեն լիալ զնախապե-
տութիւնս Մանաւագեան և զԲզնունեաց և Որդունին անուանելալ, ուր աստ
ուրեմն յետ սրբոյն Տրդատայ լարձեալ ասին ի միմեանց պատերազմաւ (38):
Եւ ի նմանէ ձգեալ ասի մեծ նախարարութիւն ազգին Խոռխոռունեաց (նույն
տեղում):

Հունաբանություն է նաև ենթակայի և դերբայավոր ստորոգյալի հոլովա-
կան համաձայնությունը. սեռական հոլովով կիրառվող ենթական անցյալ
դերբայով դրված ստորոգյալը փոխում է սեռական հոլովի, որը հունարենի
նմանողությունն է. օրինակ՝ Եւ հզօր կոռոյ եղելոյ՝ զբազումս ի Պարսիցն ըս-
պանանեն (287): Եւ հզօր մարտի եղելոյ՝ բազումք երկաթանշիրոց կողմանցն
անկան (291—292): Ուրոց ի մի վայր փասելոց բաւական էր տեսիլն մի-
այն.... (72):

Այդպիսի հունաբանություն է նաև բացառական հոլովով ենթական ան-
որոշ դերբայի հետ, որ ունեն նաև մեսրոպյան շրջանի գրողները. Զորմէ և
մեռանել ասէն ընդ Շամիրամայ ի պատերազմին (63):

Հունաբանություն է նաև անկանների սկզբում գործածվող կաղապարային ող-
ջույնի բանաձևը: Եպիսկոպոսապետ Վերանէս և ուրիշ ընդ նովալ եպիսկոպո-
սունք և ամենայն նախարարք Հայոց մեծաց, տեսառն մերոյ Կոստանդեայ կայ-
սեր ինքնակալի խնդալ: Ազոսսոս ինքնակալ կայսր Կոստանդոս մեծիդ Վր-
թսնիսի և ամենայն աշխարհականաց քոց խնդալ (261): Արգար արքայ Հա-
յոց Արտաշիսի եղբօր իմում Պարսից արքայի խնդալ (156):

Խորենացին նպատակ էր դրել այնպիսի գիրք գրել, որ իր հայրենակից-
ները հաճախ ու անհագորեն կարդան մեր հայրենիքի պատմությունը: Աբեղ-
յանը նկատի ունենալով այս նպատակը, ասում է. «Այս նպատակին հասնելու
համար պետք է ոչ լուկ պատմություն հորինել, այլ բանաստեղծորեն գրել, կամ
հորինել բանաստեղծական պատմություն»⁶:

Աբեղյանի այս ականարկը ամենից առաջ վերաբերում է Խորենացու ոճի
պատկերավորությանը: Խորենացին պատկերավոր լեզվով հատվածներ շատ
ունի, բայց դրանց մեջ առանձնապես աչքի է ընկնում Հայկի և Բելի ճակատա-
մարտի պատկերավոր նկարագրությունը: Հեղինակի միակ նպատակը չի եղել
սոսկ հաղորդումը, տեղեկությունը կատարված իրողության մասին: Նա մտա-
դրվել է նաև ընթերցողին երեակայել տալ ճակատամարտի գեղատեսիլ պատ-
կերը: Դրա համար Խորենացին իբրև օժանդակ միջոց օգտագործել է բնության
տեսարանները, ռազմական հանդերձանքի, զենքերի ու հսկայատիպ մարդ-
կանց արտաքին նկարագրությունները՝ գործադրելով գեղարվեստական խոս-
քի մի շարք հատկանիշներ: Ամենից առաջ նկատի ունենք ցայտուն ու շափա-
ղանցված համեմատությունները: Բելի հարձակումը համեմատվում է զառի-
վերից թավալվող հեղեղի հորձանքի հետ. «Իսկ Բելն... որպէս յորձան ինչ
սաստիկ ընդ զառ ի վայր հեղեղեալ՝ փութայր հասանել ի սահմանս բնակու-
թեան Հայկայ»:

6 Մ. Արևելյան, Իրկեր, հատ. Գ, էջ 316:

Հակադրությունները. Բելը գալիս է «յանդուղն և անհոռնի զորութեամբ ամբոխին», իսկ Հայկը. «Ուշիմ և խոհեմ սկայն, քաջազանդուր և խայտակն անապարեալ հաւաքէ զորդիս իւր և զթոռունս արս քաջս և աղեղնաւորս թուով յոյժ նուազունս»:

Չափազանցումները. Բելը գալիս է «յաւերժիք քաջօք և երկնադիզօք հասակօք սկայիք մրցողօք»: Ան հասեալ երկոցունց կողմանց սկայիցն ի միմեանս ահագին զորդմունս ի վերայ երկրի առնէին շահատակելով»:

Փոխաբերություններ. Բելը Հայկին պատգամ է ուղարկում՝ ասելով. «Բընակեցեր ի մէջ ցրտութեան սառնամանեաց, այլ ջեռուցեալ մեղկեա զցրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուցդ»:

Պատկերավոր նկարագրութիւն. «Եւ ինքն զլիսանոց ազուցեալ երկաթի, նշանաւորօք վերջիւք, և տախտակս պղնձիս թիկանց և լանջաց և պահպանակս բարձից և բաղկաց զօտեւորեալ զմէջսն և յաշեկէ պսուրն երկսայրի և նիզակ անարի ի ձեռին իւրում»:

Այս միջոցներով խորենացին հասել է իր նպատակին՝ ստեղծելով պատկերավոր խոսքի ցայտուն օրինակ: Բայց խոսքի պատկերավորութիւնը ինքնանպատակ կլիներ, եթե հեղինակը զրա հետ նաև իր ընթերցողների համակրանքն ու հակակրանքը չհարուցեր: Այստեղ էլ նա հասել է փայլուն արդյունքի: Հայկը խաղաղորեն ապրում է իր որդիների, թոռների, ամբողջ զերպաստանի հետ, իսկ Բելը հանդես է գալիս իբրև նվաճող բռնակալ և կռվում է բռնի կերպով իրեն ենթարկած ամբոխի զորութեամբ: Հայկի ու Բելի ճակատամարտի նկարագրությունը պատկերավոր և հուլարտահայտչական խոսքի մի հին օրինակ է մեր գրականության մեջ:

Խորենացին գիտական կազմակերպված խոսքի փայլուն օրինակներ է տալիս, խոսք, որ օժտված է կուռ տրամաբանական ու բաղմաբարդ կառուցվածքով, որի մասերը միմյանց հետ սերտ ամբողջություն են կազմում շնորհիվ քերականական ճշտագույն ձևավորվածության: Նա չի խուսափում միջանկյալ բացատրություններից, որոնք երբեմն ընդհատում են նրա հիմնական խոսքի թելը, սակայն նա միշտ ղեղեցիկ կերպով զոգում է կտրատված մասերը: Ընդ որում խորենացին բաղմաբարդ թելով կապակցում է ոչ միայն տրամաբանական դատողությունները, այլև եկարագրական նյութերը և, որ ամենակարևորն է, այդպիսի բաղմաբարդ կառուցումները ստեղծում է քերականական բաղմազան կապակցություններով՝ համադասութեամբ, զերբայական դարձվածով, շարահարութեամբ, միավորութեամբ, հարակցութեամբ, միջանկյալ նախադասություններով և այլ ձևերով և այս բարդ շարահյուսված նյութը այնպես է ավարտին հասցնում, որ բոլոր մասերը միանում են առանց առկախության, և հենց զրա հետևանքով ամբողջությունը դառնում է ավարտուն ու հասկանալի. օրինակ՝ «Զի եթէ վասն բանին մեր, որպէս ասի, պատկեր Աստուծոյ, և դարձեալ առաքինութիւն բանականին է խորհականութիւն, և քո յայսոսիկ անհատ ցանկութիւն, ապա ուրեմն ղեղեցիկ մտածութեամբ, զխոհակնութեանդ քո վառ և բորբոք պահելով ղկայծակն՝ զարդարես զբանն, որով մնաս առ ի լինելն սլատկեր. ի ձեռն որոյ և ղայսորիկ ղսկզբնատիպն ասիս ուրախացուցանել ղեղեցիկ և շափաւոր մոլութեամբ յայսոսիկ մոլեալ և ղակատեալ» (6):

Սհա և նկարագրական նյութի այդպիսի մի բաղմաբարդ կառուցվածք. «Եւ անցեալ ընդ բաղումս ի տեղեաց դայ հասանէ յարեւից կողմանէ յեզր ծովակին աղւոյ և տեսեալ առ եզերր ծովուն երկայնաձև բլուր մի, որոյ նիստ երկայնութեանն ի մուտս կոյս արեգականդ սակաւ ինչ առիկողեալ ի հիւսիսոյ, իսկ ի միջօրեայ կողմանէ, դէպ ուղիղ առ երկին հայելով՝ քաբանձաւ կանգուն անշեղ, և ի սմանէ պարաւով բացագոյն հովիտ մի դաշտաձև և երկայնաձիգ յարեւից կողմանէ լերինն իջանելով յեզր ծովուն՝ ընդարձակ և զեղեցիկ ձորաձև, որոյ ընդ մէջն հոսանք ջուրց բարեհամաց ի լեռնէն իջանելով, ի ծոր-ծորոց և ի հովտաց քամեալք և ի հիմանց փեղկից լերանց միաւորեալք ի ծաւալումն զետոց պերճանային և շէնք ոչ սակաւք ի հովտաձև ձորակին՝ յաջմէ և յահեկէ ջուրցն յօրինեալք և յարեւից կողմանէ հաճեցեալ բլրոյն լեռոն մի փոքրագոյն» (5)։

Այսպիսի ընդարձակածավալ բաղմաբարդ պարբերութեան խոսքի հետ Խորհնացին երբեմն իր միտքը այնքան հակիրճ է ձևակերպում, որ բանաձևի տպավորութիւնն է թողնում. օրինակ՝ «Արդ այս շատ է. բայց մեք որ ինչ զկնի այսորիկ»։ Վերջին նախադասութիւնը նշանակում է. «Բայց այժմ մենք չանդարդառնանք այն անցքերին, որ պատահեցին սրանից հետո»։ Խորհնացին իր համառոտաբանութեամբ շատ էր մտահոգված։ Իր մեկենասին այդ մասին գրում է. «Երկուք այսորիկ են, որք աշխատութիւն տաղնապաւ մեզ ի վերայ ի բումմէդ հասուցանեն հարցասիրութենէ՝ համառօտաւորութիւն, աւագաբաւորութիւն, և այսորիկ՝ պերճք և պայծառք, պղատոնականք իբր եղանել բանք»։

Խորհնացին այս մի նախադասութեամբ բնութագրում է իր ոճը իբրև համառոտաբանութիւն, պերճութիւն ու պարզութիւն։ Ոճի համար բնութագրական այս երեք հատկանիշները անհարիր են միմյանց նկատմամբ։ Պերճ ոճը չի կարող հակիրճ և պարզ լինել, ինչպես որ հակիրճը հաճախ կարող է խանգարել պարզութեանը։ Բայց Խորհնացին, լինելով խոսքի վարպետ՝ կարողանում է այդ երեք հատկանիշները համատեղել՝ ստեղծելով կուռ, հավաք, դիտական բարձր, զարդարուն ու պերճ խոսք։

Համառոտաբանութեան նա հասնում է զերբայական դարձվածների առատ կիրառութեամբ, սակայն Խորհնացու զերբայական դարձվածները մեծ մասամբ հունաբանական կաղապարներ են և ունեն քերականական որոշակի ձևակերպումներ. հայցական, ուղղական, սեռական, տրական, բացառական հոլովներով ենթակա անորոշ զերբայի հետ։ Նույնիսկ երբ անվարժ մեկը սովորում է տվյալ քերականական կանոնը, այնուհետև հեշտութեամբ հասկանում է։ Երբեմն էլ Խորհնացին անորոշ զերբայի վոխարեն այդպիսի ենթակաների հետ կիրառում է անցյալ զերբայ։ Պետք է ասենք նաև, որ այդպիսի զերբայական դարձվածները նա չի ծանրաբեռնում. օրինակ՝ եւ սիրելի էր ինձ յայնժամ գալ փրկչին և զիս գնել և առ նո՛սօ՛ք յաշխարհ զմութն իմ լինել (66)։ Եւ ի երկաւագոյնս նայել իմ յայնպիսի երևումն և ի հիացման լինել։ Եւ ի սէջ խաւնից այսպիսեաց երազոց բուէր ինձ կալ ի վերայ տանեաց իմոց աւբունեաց (75)։

Համառոտաբանութիւնները դառնում են կուռ բանաձևումներ ու սահմանումներ և հիմք՝ դիտական բարձր ու մշակված խոսքի համար։ Իսկ պերճութիւնն ու զարդարունութիւնը արդյունք են Խորհնացու նկարագրական նախասիրութիւնների, դիպուկ ու ձիշտ համեմատութիւնների և բնութագրական ընտիր մակդիրների։

Երվանդակերտ դաստակերտի ձուլածո նկարագրությունը զեղարվեստական խոսքի փայլուն մի օրինակ է, որը կպատշաճի դասական արվեստագետի գրչի: Քարմ ու ցայտուն համեմատությունները, բնութագրական մակդիրները բնական միջավայրի նկարագրությանը զեղարվեստական պատկերի տեսք ու երևույթ են տալիս, գրողին պատմիչից վերածելով արվեստագետի: «Քաղցր է ինձ ասել և յաղագս զեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զօր յօրինեաց նոյն ինրը Երուանդ զեղեցիկ և չքնաղ յօրինուածովք: Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ և պայծառ շինուածովք՝ լուսաւոր որպէս ական բիբ: Իսկ շուրջ զմարդկութեամբն ծաղկոցաց և հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբբովն զայլ բոլորակութիւն ական: Իսկ զբազմութիւն այգեստանոյ՝ իբրև դարտեանանց խիտ և զեղեցիկ ծիր, որով հիսիսային կողմանն դիր կարանաձե, արդարև զեղաւոր կուսից յօնից դարաւանդաց համեմատ: Իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց՝ ծնօտից պարզութեան զեղեցկութիւն: Իսկ զետն բերանացեալ դարաւանդօր ափանցն զերկթերթիսն նշանակէ շրթունս»: Դաստակերտը իր տեղանքով հորենացին պատկերավորել է միմիայն մարդու տեսքով:

Խորենացու ոճի այս հատկանիշների մասին խոսելիս Մ. Աբեղյանը գրում է. «Առհասարակ նրա ոճի մեջ չկա շինծություն ու սեթևեթանք, այլ ամեն ինչ նրա գրչի տակից բխում է բնականորեն: Զգացվում է, որ նա ապրում է իր գրածը, և այդ է հենց ազդում և զրավում և նույնիսկ հմայում. ընթերցողը համակվում է նրա զգացումով»⁷:

Մենք արդեն նշեցինք, որ Խորենացին գիտակցական վերաբերմունք ունի լեզվական ոճերի և իր իսկ ոճի նկատմամբ և այնքան հմուտ է լեզվական արվեստին, որ ըստ պատշաճի տարբեր ոճերով է գրում, և մինչև իսկ երբեմն բնութագրում է այդ զանազան ոճերը: Իր մեկենասի պահանջին իբրև պատասխան պարսկական առասպելների մասին գրում է այսպես. «Զինչ քեզ այսոքիկ կարօտութիւն առասպելք սուտք, կամ զի՞նչ պէտք անմիտ և անհանճար բանից յարմարանք: Մի՞ արդեօք յունական պերճ և ողորկ առասպելքն իցեն հանդերձ պատճառաւ, որ զճմարտութիւն իրաց այլաբանաբար յինքնանս ունին թաքուցեալ: Այլ ասես՝ մեզ պատճառս տալ անբանութեան նոցա և զարդարել զանգարդսն: Նոյն առ ի յինէն քեզ բան. զի՞նչ այսոքիկ կարօտութիւնք, որպիսի իղձքն անբաղձալոյ իրիբ բաղձալ և մեզ յաւելուլ աշխատութիւն» (90):

Խորենացու այս փոքրիկ հատվածը ոճերի բնութագրության, համառոտաբանության, գիտական, կազմակերպված ու մշակված խոսքի փայլուն օրինակ է:

Խորենացին մշակել է նամակային գրություններ, որոնք ողորկ, հակիրճ ու կտրուկ ոճի ցայտուն օրինակներ են մեր գրականության մեջ: Նամակային խոսքը սովորաբար մտերմական, անփույթ անհետևողական ու անկապակից գրությամբ է արտահայտվում: Բայց Խորենացու կազմած կամ բերած նամակները, եթե մինչև անգամ վավերական էլ չլինեն, լակոնական կուռ կապակցված բարձր հայերենի նմուշներ են: Այդ նամակների մեջ ամենից առաջ աչքի են ընկնում գիմումի և ողջույնի կաղապարային, բայց բարձր ոճով մշակված բանաձևումները, որոնք վկայություն են V դարի գրական հայերենի բարձր մշակության ու զարգացման:

⁷ Նույն տեղում, էջ 319:

Թուղթ նախարարացն առ Խոսրով

«Ստրատելատ Գաղաւոն և ամենայն նախարարք Հայոց մասինն Յունաց տեառն մերում Խոսրովայ արքայի կողմանն Այրարատոյ խնդալ:

Ինքնին, տէր, զմիամտութիւն մեր առ յիշեցեսլ թագաւորին մերում Արշակայ, զոր մինչև զօր վախճանի անշրջելի պահեցաք. և արդ խորհեալ եմք նոյնպէս ծառայել թեզ միամտութեամբ, եթէ հաստատեսցես առ մեզ դաշամբք զերիսս զայս. առաջին՝ չիշել զյանցանս մեր, զոր պատերազմեցաք ընդ քեզ ի հարկէ և ոչ ի կամաց: Երկրորդ՝ զի դարձուցես ի մեզ դամենայն ժառանգութիւնս մեր, որ ի մասինդ Պարսից, զոր հատէք յարքունիս: Երրորդ՝ հնարել թափել զմեզ ի կայսերէ, զի մի վրդովեսցեն զբնակութիւնս մեր, որք ունիմք իշխանութիւն յայսմ բաժնի: Եւ զայս պայման ուխտի զրեալ և խաչ հաստատեալ կնքեսցես, զորս տեսեալ փութացուք ի ծառայութիւն ձեր: Ո՛ղջ լեր, տէր մեր»:

Իսկ Խոսրովը նախարարներին պատասխանում է հետևյալ նամակով:

Թուղթ Խոսրովու առ նախարարսն

«Քաջ արանց Խոսրով հայոց արքա Ստրատելատիդ Գաղաւոնի և ամենայն նախարարացդ մերոց ողջոյն շատ:

Ուրախ լերուք, զի մեք ողջ եմք և ուրախացաք ընդ լուր ողջունի ձերոյ և առաքեցաք ըստ խնդրոյ ձերոյ զայս պայման ուխտի: Առաջին՝ չիշել զյանցանս ձեր, զոր շունէաք առ յանցանս իսկ, այլ առ երախտաւորս՝ զմիամտելն առ թագաւորին Արշակունւոյ, զոր պաշտէիքն, զի և առ մեզ զնոյն յուսամք լինել: Երկրորդ՝ դարձուցանել ի ձեզ զժառանգութիւնս ձեր, զոր ունիմք յարքունիս, բայց յայնմանէ, զոր ումեք ումեք պարդեցաք, զի ոչ շրջին պարզեք թագաւորաց առանց վնասու, մանաւանդ զի ի դիւան հօրն մերոյ տեառն Ծապոյց արքայից արքայի եմուտ, այլ փոխանակ ընդ այնր յարքունուստ լնումք ձերոյն պակասութիւն: Երրորդ՝ թափեմք զձեզ ի դորձակալացն Յունաց, թէպէտ պատերազմաւ ընդ կալսեր, թէպէտ խաղաղութեամբ...»:

Սրանք սոսկ նամակներ չեն, այլ նաև պաշտոնական գրադրութիւններ են, որոնց ոճին ևս մեզ ծանոթութիւն է տալիս Խորենացին:

Խորենացին մեզ է ավանդել թուղթ, իմաստուն, առաժական խոսքերի կտրուկ բանաձևումներ, որոնք 1500 տարի հալ ժողովրդի խոսքի զարդերն են եղել. ահա մի բանի օրինակներ.

Առաքինութիւն բանականին է խոհականութիւն (6): Եւ Սողոն, Սողոն, զեղեցիկս բարբառեցար՝ ոչ երանել զբարեբախտութիւն մարդոյ մինչև ի վախճան (125): Ավա՛ղ փառացս անցաւորի (125): Սահմանք քաջաց զէնն իւրեանց, որքան հատանէ, այնքան ունի (29): Խէ քո շարայի որկորն է, մեր Շիրակայ ամբարք չեն (40): Իսկ արդ արդեօք իցէ՞ սիրելւոյ այլ որ ես (90): Մինչ դու զնացեր և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս ում թագաւորեմ (192) և այլն:

Մեր հին գրական լեզուն Խորենացու գրքի միջոցով աննախընթաց վերելք ապրեց և մեր լեզվի հետագա զարգացման վրա քիչ զրբեր են այնպիսի խոր ու արդյունավետ ազդեցութիւն թողել, ինչպիսին որ ունեցել է Խորենացու

«Պատմութիւն Հայոցը», մի գիրք, որ դարեր շարունակ դասագրքի դեր է կատարել և լեզու է սովորեցրել բազմաթիվ սերունդների, որոնք իրենց գրավոր ու բանավոր խոսքի կազմակերպման մեջ միշտ խորենացուն են առաջնորդ ունեցել:

ЯЗЫК И СТИЛЬ ХОРЕНАЦИ

Доктор филол. наук В. Д. АРАКЕЛЯН

(Резюме)

Язык и стиль «Истории Армениии» Мовсеса Хоренаци до сих пор детально не изучались. Настоящая статья является первой попыткой в этом направлении.

В течение 1500 лет труд Хоренаци оказывал огромное влияние на общественно-политическую мысль, исторнографию и литературный язык армянского народа. Хоренаци в V в. впервые создал 800 слов, прочно вошедших в армянский язык и продолжающих жить в современном армянском литературном языке, а частично — и в разговорной речи. Ученик и последователь Месропа Маштоца и Саака Партева, Хоренаци, следуя языковым традициям своих учителей, обогатил и переработал литературный язык для народа, а не для небольшого числа знатоков греческой словесности. Влияние греческого языка на язык Хоренаци нельзя отрицать, но это только влияние, а не слепая имитация.

В статье рассматриваются слои богатого словарного состава и стиль произведения Хоренаци, а также вопросы, касающиеся влияния греческого языка в его книге.